



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N_67

Տուգանք նշանակելու մասին

10.03.2021թ.

ք. Երևան

Քննելով տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները կատարողի կողմից 2021թ. փետրվարի 04-ին «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի տնօրեն Հայկազ Սարգսյանի նկատմամբ թիվ 7 որոշմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը (27.08.2020թ. թիվ 433-Ա հրաման, ստուգման ակտ թիվ 433-Ա կազմված 20.11.2020թ., խախտումների մասին 04.09.2020թ. արձանագրությունը, տուգանք նշանակելու մասին 09.12.2020թ. թիվ 318 որոշումը, բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ 20.11.2020թ. արձակված թիվ 27 կարգադրագիրը և այլ նյութեր).

Պ Ա Ր Զ Ե Յ Ի

Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 27-ի N 433-Ա հրամանի հիման վրա Տեսչական մարմնի չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչության ծառայողները իրականացրել են համապատասխան ստուգում, որի արդյունքում պարզվել է, որ ՍՊԸ-ում օգտագործվող օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցները ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանում ստուգաչափված չեն եղել:

Հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ 20.11.2020թ. արձակվել է չափման միջոցների շահագործումն արգելելու մասին թիվ 27 կարգադրագիրը, սակայն «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի տնօրեն Հայկազ Սարգսյանի կողմից չեն կատարվել կարգադրագրի պահանջները:

Փաստացի խախտվել են «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 28.3-րդ հոդվածի, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 244 պրիմ 7 հոդվածով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Տվյալ իրավախախտման համար պատասխանատու ճանաչել «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի տնօրեն Հայկազ Ավետիքի Սարգսյանին /հասցե՝ ք.Երևան Դավիթաշեն 2 թղմ. 43 շենք 4 բն./ և կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը, սահմանել տուգանք՝ 200.000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305 հոդվածի՝ տուգանքը պետք է վճարվի **Պետական բյուջե 900005024014 հ/հ** տուգանք նշանակելու մասին որոշումը իրավախախտողին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

3. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

4. Տուգանքը սահմանված ժամկետում վճարելուց հետո բանկային կտրոնի պատճենը անհրաժեշտ է 3 օրվա ընթացքում ներկայացնել տեսչական մարմնին՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում Վարչական դատարան:

Տեսչական մարմնի ղեկավար՝



Արմեն Կոտոլյան